ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 319 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 201-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի մարտի 25-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Համայնքների զարգացում» N 201-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01541435) 2025 թվականի ապրիլի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի մայիսի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում գովազդի հեռարձակման ծառայությունների մատուցում՝ 1,201,545 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ռադիո Վան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00035708) 2025 թվականի ապրիլի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի

մայիսի 1-ից մինչև 2025 թվականի հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում գովազդային աուդիոձայնագրության հեռարձակման ծառայությունների մատուցում՝ 1,522,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Թիմ Սիսթեմս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00229394) 2025 թվականի ապրիլի 28-ին կնքված՝ թիվ CPCW/AM/07042025 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրատեխնիկական համակարգի ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 2,294,850 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

19.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ